2. Սույն որոշման հավելված 2-ի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 18

ԴԵՄ- 0

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԳԱԼՈՒՍՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԶԵԼԻ ԱՐՄԵՆՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏԶՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՁԵՌՆՊԱԿ - 5

ՍԱՐԻՔԵԿ ՕՎՈՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

A handwritten signature in blue ink, written over the seal.

Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Հավելված 1

Հաստատված է
«Արագածոտն մարզի
Աշտարակ համայնքի ավագանու
01.02.2022թ. N 7-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժին
2. Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
3. Վերահսկողության և մոնիթորինգի բաժին
4. Իրավաբանական բաժին
5. Տրանսպորտի, կոմունալ տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժին
6. Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին
7. Քաղաքաշինության և հողաշինության բաժին
8. Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին
9. Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին
10. Զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժին

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն

Հավելված 2

Հաստատված է

ՀՀ Արագածոտն մարզի

Աշտարակ համայնքի ավագանու

01.02.2022թ. N 7-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

Աշխատակիցների թվաքանակը՝ 214:

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Միավորը	Դրույքաչափը	Գումարը
1. Քաղաքական, հայեցողական և վարչական պաշտոններ				
1	Համայնքի ղեկավար	1	565000	565000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	458000	458000
3	Համայնքի ղեկավարի տեղակալներ	2	458000	916000
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	2	310000	620000
5	Համայնքի ղեկավարի օգնական	3	290000	870000
6	Մամուլի քարտուղար	1	330000	330000
7	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական	1	200000	200000
8	Համայնքի ղեկավարի տեղակալի օգնական	1	150000	150000
Վարչական ղեկավարներ				
1	մինչև 500 բնակչություն ունեցող վարչական տարածք	5	250000	1250000
2	501-1500 բնակչություն ունեցող վարչական տարածք	10	330000	3300000
3	1501-3000 բնակչություն ունեցող վարչական տարածք	6	350000	2100000
4	3001-ից ավել բնակչություն ունեցող վարչական տարածք	6	380000	2280000
Ընդամենը		39		13 039 000
2. Համայնքային ծառայություն				
1	Աշխատակազմի քարտուղար	1	458000	458000
2	Գլխավոր մասնագետ-անձնակազմի կառավարման գծով	1	200000	200000
3	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	4	200000	800000
4	Աշխատակազմի առաջատար մասնագետ	2	180000	360000

Ընդամենը		8		1 818 000
Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Բաժնի պետի տեղակալ	1	300000	300000
3	Գլխավոր մասնագետ	4	200000	800000
4	Առաջատար մասնագետ	4	180000	720000
Ընդամենը		10		2 220 000
Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Բաժնի պետի տեղակալ	1	300000	300000
3	Գլխավոր մասնագետ	7	200000	1400000
4	Առաջատար մասնագետ	9	180000	1620000
Ընդամենը		18		3 720 000
Վերահսկողության և մոնիթորինգի բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Գլխավոր մասնագետ	2	200000	400000
3	Առաջատար մասնագետ	2	180000	360000
Ընդամենը		5		1 160 000
Իրավաբանական բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Գլխավոր մասնագետ	1	200000	200000
3	Գլխավոր մասնագետ /ՔԿԱԳ/	1	166000	166000
4	Առաջատար մասնագետ	2	180000	360000
5	Առաջատար մասնագետ /ՔԿԱԳ/	1	156000	156000
Ընդամենը		6		1 282 000
Տրանսպորտի, կոմունալ տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Գլխավոր մասնագետ	2	200000	400000
3	Առաջատար մասնագետ	2	180000	360000
Ընդամենը		5		1 160 000
Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Բաժնի պետի տեղակալ	1	300000	300000
3	Գլխավոր մասնագետ	3	200000	600000

4	Առաջատար մասնագետ	3	180000	540000
Ընդամենը		8		1 840 000
Քաղաքաշինության և հողաշինության բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Բաժնի պետի տեղակալ	1	300000	300000
3	Գլխավոր մասնագետ	8	200000	1600000
4	Առաջատար մասնագետ	6	180000	1080000
Ընդամենը		16		3 380 000
Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Բաժնի պետի տեղակալ	1	300000	300000
3	Գլխավոր մասնագետ	3	200000	600000
4	Առաջատար մասնագետ	5	180000	900000
Ընդամենը		10		2 200 000
Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Բաժնի պետի տեղակալ	1	300000	300000
3	Գլխավոր մասնագետ	2	200000	400000
4	Առաջատար մասնագետ	4	180000	720000
Ընդամենը		8		1 820 000
Զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժին				
1	Բաժնի պետ	1	400000	400000
2	Գլխավոր մասնագետ	2	200000	400000
3	Առաջատար մասնագետ	2	180000	360000
Ընդամենը		5		1 160 000
ԸՆԴԱՄԵՆԸ		99		
3. Սպասարկող անձնակազմ				
1	Տնտեսվար	1	250000	250000
2	Գործավար	1	300000	300000
3	Գործավար	1	200000	200000
4	Խմբակցության գործավար	3	200000	600000
5	Համակարգող	4	300000	1200000

6	Կարգավար	1	250000	250000
7	Զին. և զորահավաքային մասնագետ - գործավար	3	220000	660000
8	մինչև 500 բնակչություն ունեցող վարչական տարածք օպերատոր	5	170000	850000
9	501-1500 բնակչություն ունեցող վարչական տարածք օպերատոր	10	200000	2000000
10	1501-3000 բնակչություն ունեցող վարչական տարածք օպերատոր	12	200000	2400000
11	3001-ից ավել բնակչություն ունեցող վարչական տարածք օպերատոր	18	200000	3600000
12	Վարորդ /ավտոբուսի/	1	200000	200000
13	Վարորդ	1	280000	280000
14	Վարորդ /աշխատակազմի/	1	200000	200000
15	Վարորդ /ուսանողական ավտոբուսի/	0.5	100000	50000
16	Հավաքարար	2	150000	300000
17	Ցրիչ	2	200000	400000
18	Էլեկտրիկ	1	200000	200000
19	Պահակ	1	200000	200000
20	Բանվոր	1	200000	200000
21	Աշտարակի քաղաքային գերեզմանատների պատասխանատու	1	230000	230000
22	Վարչական շրջանների գերեզմանատների պատասխանատու	1	350000	350000
Ընդամենը		70,5		14 920 000
4.Քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմ				
1	Անասնաբույժ	5	130000	650000
ԸՆԴԱՄԵՆԸ		213,5		50 379 000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

01-ը փետրվարի 2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.01.2022թ. N 4-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 6

/Ձեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/

N 8 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Ուժը կորցրած ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 21.01.2022թ. N 4-Ա որոշումը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 18

ԴԵՄ-0

ՁԵՌՆՊԱՀ - 5

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՅԱՆ
ԳԱԼՈՒՍՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՁՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇՄԱԿՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

01-ը փետրվարի 2022թ.

<<ԱՇՏԱՐԱԿԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿԱՄԱՆ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 6

/Ձեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/

N 9 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը, Աշտարակ համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ համայնքի տարածքում խմելու ջրի և ջրահեռացման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> համայնքային հիմնարկ (այսուհետ՝ հիմնարկ):

2. Հաստատել հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Հաստատել հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

4. Աշտարակ համայնքի ղեկավարին՝

1) ապահովել հիմնարկի կանոնադրության հաշվառումն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 18

ԴԵՄ- 0

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՅԱՆ

ԳԱԼՈՒՍԾ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՆԱԶԵԼԻ ԱՐՄԵՆՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՁԵՌՆՊԱԿ - 5

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՉՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Հավելված 1

Հաստատված է

Աշտարակ համայնքի ավագանու

2022 թվականի փետրվարի 1-ի N 9-Ա որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԱՇՏԱՐԱԿԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿԱՄԱՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման» համայնքային հիմնարկը (այսուհետ՝ հիմնարկ) Աշտարակի համայնքապետարանի կազմում գործող՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող, համայնքային բյուջետային կազմակերպություն է:

2. Հիմնարկի հիմնադիրն Աշտարակ համայնքն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու (այսուհետ՝ հիմնադիր):

3. Հիմնարկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Հիմնադրի և հիմնարկի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

5. Հիմնարկի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «ԱՇՏԱՐԱԿԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿԱՄԱՆ» համայնքային հիմնարկ.

2) ռուսերեն լրիվ՝ Общинное учреждение «СНАБЖЕНИЯ И СЕРВИСА ПИТЬЕВОЙ ВОДЫ АШТАРАКА» .

3) անգլերեն լրիվ՝ Community Agency «DRINKING WATER SUPPLY AND SERVICE OF ASHTARAK».

4) հայերեն կրճատ՝ «ԱԽՋՄՍ» ՀՀ.

5) ռուսերեն կրճատ՝ ОУ «ССПВА».

6) անգլերեն կրճատ՝ CA «DWSSA»:

6. Հիմնարկի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի

մարզ, ք. Աշտարակ Ն. Աշտարակեցու հր.7:

II. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

7. Հիմնարկի գործունեության հիմնական նպատակն Աշտարակ համայնքի տարածքում խմելու ջրի ամենօրյա մատակարարման (ըստ անհրաժեշտության՝ ջրահեռացման) աշխատանքների իրականացման ապահովումն է:

8. Հիմնարկի հիմնական խնդիրներն են՝

1) Բնակչությանը սանիտարահիգիենիկ տեսակետից բարձրորակ խմելու ջրի ամենօրյա մատակարարման (ըստ անհրաժեշտության՝ ջրահեռացման) աշխատանքների իրականացման ապահովումը.

2) Համայնքի տարածքում խմելու ջրի արդյունահանումը, տեղափոխումը և իրացումը.

3) Ջրային կառույցների, ջրատարների, տեխնոլոգիական սարքավորումների շահագործումը, վերանորոգումը, վերակառուցումը, նորերի կառուցումը, կարգաբերումը և պահպանումը.

4) Ըստ անհրաժեշտության կեղտաջրերի հեռացումը և մաքրումը.

5) Խմելու ջրի խնայողաբար օգտագործման խթանումը, հասարակական տեղեկատվության ապահովումը.

6) Շրջակա միջավայրի պահպանման ապահովումը.

7) Վերակառուցման, տեխնիկական վերազինման և արդիականացման աշխատանքների կատարումը.

8) Խմելու ջրի որակի պարբերական վերահսկողության իրականացումը.

9) Սահմանված վճարների մշակման, կիրառման, հավաքագրման աշխատանքների իրականացումը:

10) Ըստ անհրաժեշտության՝ համայնքային ենթակայության կազմակերպությունների պահանջներից բխող այլ աշխատանքների իրականացումը:

III. ՀԻՄՆԱՐԿԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

9. Հիմնարկի իրավունակությունը ծագում է նրա կանոնադրության հաստատման մասին հիմնադրի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

10. Հիմնարկի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

11. Հիմնարկն իր հիմնադրի անունից, սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակին համապատասխան, կարող է ունենալ քաղաքացիական իրավունքներ և կրել այդ գործունեության հետ կապված քաղաքացիական պարտականություններ:

12. Հիմնարկին պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրա

պաշտպանության իրավունքը, հիմնարկն իրականացնում է հիմնադրի հայեցողությամբ՝ նրա անունից:

13. Հիմնարկն ունի անվանում, հիմնադրի կողմից իրեն անհատույց օգտագործման իրավունքով հանձնված գույք, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմակնիք: Հիմնարկն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով:

14. Հիմնարկն օրենքի սահմաններում՝ սույն կանոնադրությամբ նախատեսված ոլորտների և խնդիրների իրականացման համար հիմնադրի անունից իրավունք ունի՝

1) ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ:

2) դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելու պայմանագրեր և կրելու պարտավորություններ:

15. Հիմնարկի իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով, ինչպես նաև՝ հիմնադրի որոշմամբ:

16. Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում հիմնադիրը՝ օրենքով սահմանված կարգով:

17. Հիմնարկը պարտավոր է՝

1) օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական և ֆինանսական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ:

2) ապահովել կազմակերպության փաստաթղթերի (կազմակերպության կանոնադրություն, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթեր, կազմակերպության ներքին փաստաթղթեր, տարեկան հաշվետվություններ, հաշվապահական և ֆինանսական հաշվառման փաստաթղթեր, կառավարման մարմինների նիստերի արձանագրություններ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթեր) պահպանումը:

IV. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

18. Հիմնարկի կառավարումն իրականացնում է Աշտարակ համայնքի ղեկավարը (այսուհետ՝ լիազոր մարմին): Լիազոր մարմինն է պատկանում հիմնարկի կառավարման և գործունեության վերաբերյալ ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

19. Հիմնարկի հիմնադրի լիազորություններն են՝

1) հիմնարկի կառուցվածքի, աշխատակիցների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանումը:

2) հիմնարկի գործունեության դադարման մասին որոշման ընդունումը:

3) հիմնարկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների ու լրացումների կատարումը:

20. Լիազոր մարմինը՝

- 1) հաստատում է հիմնարկի պահպանման ծախսերի տարեկան նախահաշիվը,
- 2) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է հիմնարկի տնօրենին.
- 3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

21. Հիմնարկի տնօրենը՝

1) գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնադրության, հիմնադրի, լիազոր մարմնի կողմից տրված հանձնարարականների համաձայն.

2) հաշվետու է հիմնադրին և լիազոր մարմնին.

3) պատասխանատու է հիմնարկի գործունեության համար.

4) չի կարող զբաղեցնել այլ վճարովի պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

5) լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Աշտարակ համայնքին պատճառած վնասի համար: Հիմնարկի տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ տնօրինում է հիմնարկի գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները), գործարքներ է կնքում հիմնադրի անունից.

7) ներկայացնում է հիմնարկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

8) գործում է առանց լիազորագրի.

9) տալիս է հիմնարկի անունից հանդես գալու լիազորագրեր.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային).

11) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը.

12) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում հիմնարկի աշխատողներին.

13) հիմնարկի աշխատողների նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

14) արձակում է աշխատանքային իրավահարաբերություններից բխող հրամաններ հիմնարկի աշխատողներին արձակուրդ տրամադրելու (հետ կանչելու), նրանց գործուղումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում իր գործուղումների վերաբերյալ.

15) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

V. ՀԻՄՆԱՐԿԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

22. Հիմնարկը չունի հիմնադրից առանձնացված գույք: Հիմնարկի գույքը սեփականության իրավունքով պատկանում է հիմնադրին:

23. Հիմնարկի գույքային իրավունքների օբյեկտներն են՝

- 1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները.
- 2) աշխատանքները և ծառայությունները.
- 3) տեղեկատվությունը.
- 4) ոչ նյութական բարիքները:

24. Հիմնարկի տիրապետմանն ու օգտագործմանը կարող է պատկանել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել հիմնարկին:

25. Հիմնարկի գույքը գտնվում է Աշտարակ համայնքի պաշտպանության ներքո:

VI. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

26. Հիմնարկի գործունեությունը կարող է դադարել միայն հիմնադրի որոշմամբ:

27. Հիմնարկի հիմնադիրը կազմակերպության գործունեության դադարման մասին որոշմամբ նաև նշանակում է լուծարային հանձնաժողով, սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Հիմնարկի լուծարման ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսվանից:

28. Հիմնարկի գործունեությունը համարվում է դադարած՝ հիմնադրի սահմանած օրվանից:



ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն

Հավելված 2
Հաստատված է
 Աշտարակ համայնքի ավագանու
 2022 թվականի փետրվարի 1-ի N 9-Ա որոշմամբ

<<ԱՇՏԱՐԱԿԻ ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 55

N	Հաստիքացուցակ	Հաստիքային միավորը	1 միավորի դրույքաչափը /դրամ/	Ընդամենը	Աշխատակիցների թվաքանակը
1	Տնօրեն	1	450000	450000	1
2	Տնօրենի տեղակալ	1	400000	400000	1
3	Զրի որակի պատասխանատու	1	170000	170000	1
4	Փականագրործ	3	230000	690000	3
5	Վարորդ	3	180000	540000	3
6	Հսկիչ- հավաքագրող	25	200000	5000000	25
7	Մեխանիկատոր	3	400000	1200000	3
8	Բանվոր	15	200000	3000000	15
9	Զոդող	3	270000	810000	3
	ԸՆԴԱՄԵՆԸ	55		12260000	55



ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒԴԱՐ՝ Ս. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

01-ը փետրվարի 2022թ.

<<ԱՇՏԱՐԱԿԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 6

/Ձեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/

N 10 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը և <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը, Աշտարակ համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները Աշտարակ համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացնելու նպատակով ստեղծել <<Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում>> համայնքային հիմնարկ (այսուհետ՝ հիմնարկ):

2. Հաստատել հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի 1-ի:

3. Հաստատել հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

4. Աշտարակ համայնքի ղեկավարին՝

1) ապահովել հիմնարկի կանոնադրության հաշվառումն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 23

ԴԵՄ - 0

ՁԵՌՆՊԱՀ - 0

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ

ՏԱՐՈՆ ՀԱԿՈՐՅԱՆ
ՌՈՒՋԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԳԱԼՈՒՍՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՆԱԶԵԼԻ ԱՐՄԵՆՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ՍԱՐԻՔԵԿ ՕՎՈՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՉՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. ՇԱՀԱՎԵՐԴՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԱՇՏԱՐԱԿԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը (այսուհետ՝ հիմնարկ) Աշտարակի համայնքապետարանի կազմում գործող՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային բյուջետային կազմակերպություն է:

2. Հիմնարկի հիմնադիրն Աշտարակ համայնքն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու (այսուհետ՝ հիմնադիր):

3. Հիմնարկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Հիմնադրի և հիմնարկի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

5. Հիմնարկի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ.

2) ռուսերեն լրիվ՝ Общинное учреждение «Вывоз мусора и санитарная очистка Аштарак» .

3) անգլերեն լրիվ՝ Community Agency «Waste removal and sanitary cleaning of Ashtarak».

4) հայերեն կրճատ՝ «ԱԱՄՄ» ՀՀ.

5) ռուսերեն կրճատ՝ ОУ «ВМСОА».

6) անգլերեն կրճատ՝ CA «WRSCA»:

6. Հիմնարկի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ Ն. Աշտարակեցու հր.7:

II. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

7. Հիմնարկի գործունեության հիմնական նպատակն Աշտարակ համայնքի տարածքի աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ՝ ձմեռային ամիսներին) աշխատանքների իրականացման ապահովումն է:

8. Հիմնարկի հիմնական խնդիրներն են՝

1) աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ՝ ձմեռային ամիսներին) աշխատանքների պարտադիր և պարբերաբար իրականացումը.

2) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցումը և չեզոքացումը.

3) բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը. աղբահանության և սանիտարական մաքրման վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկվածության ապահովումը.

4) բնակչությունից և իրավաբանական անձանցից աղբահանության վարձավճարների գանձման աշխատանքների ապահովումը.

III. ՀԻՄՆԱՐԿԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

9. Հիմնարկի իրավունակությունը ծագում է նրա կանոնադրության հաստատման մասին հիմնադրի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

10. Հիմնարկի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

11. Հիմնարկն իր հիմնադրի անունից, սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակին համապատասխան, կարող է ունենալ քաղաքացիական իրավունքներ և կրել այդ գործունեության հետ կապված քաղաքացիական պարտականություններ:

12. Հիմնարկին պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրա պաշտպանության իրավունքը, հիմնարկն իրականացնում է հիմնադրի հայեցողությամբ՝ նրա անունից:

13. Հիմնարկն ունի անվանում, հիմնադրի կողմից իրեն անհատույց օգտագործման իրավունքով հանձնված գույք, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմակնիք: Հիմնարկն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով:

14. Հիմնարկն օրենքի սահմաններում՝ սույն կանոնադրությամբ նախատեսված ոլորտների և խնդիրների իրականացման համար հիմնադրի անունից իրավունք ունի՝

1) ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ.

2) դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելու պայմանագրեր և կրելու պարտավորություններ:

15. Հիմնարկի իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով, ինչպես նաև՝ հիմնադրի որոշմամբ:

16. Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում հիմնադիրը՝ օրենքով սահմանված կարգով:

17. Հիմնարկը պարտավոր է՝

1) օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական և ֆինանսական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ.

2) ապահովել կազմակերպության փաստաթղթերի (կազմակերպության կանոնադրություն, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթեր, կազմակերպության ներքին փաստաթղթեր, տարեկան հաշվետվություններ, հաշվապահական և ֆինանսական հաշվառման փաստաթղթեր, կառավարման մարմինների նիստերի արձանագրություններ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթեր) պահպանումը:

IV. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

18. Հիմնարկի կառավարումն իրականացնում է Աշտարակ համայնքի ղեկավարը (այսուհետ՝ լիազոր մարմին): Լիազոր մարմինն է պատկանում հիմնարկի կառավարման և գործունեության վերաբերյալ ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

19. Հիմնարկի հիմնադրի լիազորություններն են՝

1) հիմնարկի կառուցվածքի, աշխատակիցների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանումը.

2) հիմնարկի գործունեության դադարման մասին որոշման ընդունումը.

3) հիմնարկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների ու լրացումների կատարումը:

20. Լիազոր մարմինը՝

1) հաստատում է հիմնարկի պահպանման ծախսերի տարեկան նախահաշիվը,

2) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է հիմնարկի տնօրենին.

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

21. Հիմնարկի տնօրենը՝

1) գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնադրության, հիմնադրի, լիազոր մարմնի կողմից տրված հանձնարարականների համաձայն.

2) հաշվետու է հիմնադրին և լիազոր մարմնին.

3) պատասխանատու է հիմնարկի գործունեության համար.

4) չի կարող զբաղեցնել այլ վճարովի պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

5) լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Աշտարակ համայնքին

պատճառած վնասի համար: Հիմնարկի տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ տնօրինում է հիմնարկի գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները), գործարքներ է կնքում հիմնադրի անունից.

7) ներկայացնում է հիմնարկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

8) գործում է առանց լիազորագրի.

9) տալիս է հիմնարկի անունից հանդես գալու լիազորագրեր.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային).

11) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը.

12) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում հիմնարկի աշխատողներին.

13) հիմնարկի աշխատողների նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

14) արձակում է աշխատանքային իրավահարաբերություններից բխող հրամաններ հիմնարկի աշխատողներին արձակուրդ տրամադրելու (հետ կանչելու), նրանց գործուղումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում իր գործուղումների վերաբերյալ.

15) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

V. ՀԻՄՆԱՐԿԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

22. Հիմնարկը չունի հիմնադրից առանձնացված գույք: Հիմնարկի գույքը սեփականության իրավունքով պատկանում է հիմնադրին:

23. Հիմնարկի գույքային իրավունքների օբյեկտներն են՝

1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները.

2) աշխատանքները և ծառայությունները.

3) տեղեկատվությունը.

4) ոչ նյութական բարիքները:

24. Հիմնարկի տիրապետմանն ու օգտագործմանը կարող է պատկանել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել հիմնարկին:

25. Հիմնարկի գույքը գտնվում է Աշտարակ համայնքի պաշտպանության ներքո:

VI. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

26. Հիմնարկի գործունեությունը կարող է դադարել միայն հիմնադրի որոշմամբ:

27. Հիմնարկի հիմնադիրը կազմակերպության գործունեության դադարման մասին որոշմամբ նաև նշանակում է լուծարային հանձնաժողով, սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Հիմնարկի լուծարման ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսվանից:

28. Հիմնարկի գործունեությունը համարվում է դադարած՝ հիմնադրի սահմանած օրվանից:



ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն

Հավելված 2
 Հաստատված է
 Աշխարհակ համայնքի ավագանու
 2022 թվականի փետրվարի 1-ի N 10-Ա որոշմամբ

«ԱՇՏԱՐԱԿԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 197

N	Հաստիքացուցակ	Հաստիքային միավորը	1 միավորի դրույթաչափը /դրամ/	Ընդամենը	Աշխատակիցների թվաքանակը
1	Տնօրեն	1	450000	450000	1
2	Տնօրենի տեղակալ	2	400000	800000	2
3	Վերահսկողության պատասխանատու	3	250000	750000	3
4	Անձնակազմի կառավարման մասնագետ-գործավար	1	200000	200000	1
5	Գործավար	2	180000	360000	2
6	Հավաքագրող	20	պայմ.		20
7	Ավտոպարկի և տեխնիկական միջոցների համակարգման և կառավարման պատասխանատու	2	280000	560000	2
8	Սաննաքրման կառավարման և համակարգման պատասխանատու	1	350000	350000	1
9	Աղբահանության կառավարման և համակարգման պատասխանատու	1	350000	350000	1
10	Պահեստապետ	2	330000	660000	2
11	Ավտոպարկի բանվոր	5	200000	1000000	5
12	Թմալքի վարպետ	2	270000	540000	2
13	Ավտոէլեկտրիկ	2	270000	540000	2
14	Զորոլ	2	270000	540000	2
15	Պահակ	6	120000	720000	6
16	Տեխնիկական վարպետ	2	270000	540000	2
17	Սեխանիզատոր	5	300000	1500000	5
18	Հավաքարար	35	150000	5250000	35
19	Աղբամաններն ախտահանող բանվոր	2	150000	300000	2

20	Սանիտարական մաքրման բազմաֆունկցիոնալ մեքենայի վարորդ	6	300000	1800000	6
21	Սանիտարական մաքրման բանվոր	15	180000	2700000	15
22	Աղբահանության բանվոր	50	220000	11000000	50
23	Հատուկ հանակցված մեքենայի վարորդ	15	300000	4500000	15
24	Վարորդ	15	280000	4200000	15
ԸՆԴԱՄԵՆԸ			6070000	39610000	197



ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն